Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Փրկարարի օրվա կապակցությամբ

04.09.2025

ՆԳՆ փրկարար ծառայության սիրելի՛ աշխատակիցներ, գեներալնե՛ր, սպանե՛ր, տիկնա՛յք և պարոնա՛յք փրկարարներ, հարգարժա՛ն վետերաններ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական օրվա առթիվ:

Ձեր նվիրվածությունն ու պատրաստակամությունն ամեն օր՝ երբեմն կյանքի գնով, երաշխավորում են մեր քաղաքացիների անվտանգությունն ու բարօրությունը: Անկախ իրավիճակից՝ տարերային աղետ, տեխնածին վթար, հրդեհ կամ փրկարարական այլ առաքելություն, դուք մշտապես գտնվում եք առաջին գծում՝ ցուցաբերելով արիություն, հոգատարություն և բարձր պատասխանատվություն:

Ձեր անձնվեր ծառայությունը ոչ միայն պաշտպանում է մարդկային կյանքեր, այլև ամրապնդում է վստահությունն ու հույսը մեր հասարակության մեջ: Դուք օրինակ եք հայրենասիրության, արհեստավարժության և ծառայողական բարձր մշակույթի:

Ձեր առաքելությունը չափազանց կարևոր է՝ հատկապես մեր ժամանակներում, երբ անսպասելի իրավիճակները դարձել են կյանքի անբաժան մաս: Դուք առաջինն եք, ովքեր կանգնում են վտանգի դիմաց՝ երբեմն ակնթարթների ընթացքում ընդունելով ճակատագրական որոշումներ, փրկելով կյանքեր, կանխելով անդառնալի հետևանքներ:

Ձեր աշխատանքը չափվում է ոչ միայն արձագանքման արագությամբ, այլև մարդկանց հանդեպ ունեցած հոգատարությամբ, թիմային համագործակցությամբ և գործին նվիրվածությամբ: Այդ նվիրվածությունն է, որ ստեղծում է վստահություն և ամրացնում հասարակության անվտանգությանը ուղղված համակարգված ջանքերը:

Թող ձեր ծառայությունը լինի անվտանգ, ձեր ջանքերը՝ արժանապատվորեն գնահատված, իսկ պետության և հասարակության աջակցությունը՝ մշտական ուղեկից:

Մաղթում եմ խաղաղություն, առողջություն և անփորձանք ծառայություն: